ՎԵՆԵՏԻԿՅԱՆ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ

XV—XVII դդ. լեհահայ գաղութներում ստեղծված հայատառ ղփչաղերեն նյութերի մեջ առանձնահատուկ տեղ են գրավում տարեգրությունները։ Դրանցից ամենածավալունն ու արժեքավորը «Կամենիցյան տարեգրությունն» է, որը հրատարակել է Ղ. Այիշանը նախ «Բազմավեպում» (Թերթ)[1], ապա՝ մեկ տարի անց, 1896 թ.՝ «Կամենիցյա ժողովածուում»[2]։ Նույն ժողովածուի հավելվածների բաժնում զետեղված է մեկ այլ տարեգրություն, որի լրիվ վերնագիրն է՝ «Քրոյնիկ վէնէցիանընկ հէմ օգկա իշլար» («Վենետիկյան տարեգրություններ և այլ բաներ»)։ Այս տարեգրությունը գարդ հայտնաբերված հայատառ ղփչաղերեն վավերագրերից ամենահինն է։ Նրա անհայտ հեղինակը կամ հեղինակները այն սկսել են շարադրել 1492 թ. և հասցրել մինչև 1536 թ.։ «Վենետիկյան տարեգրության» ուսումնասիրման փորձ է կատարել ֆրանսիացի թուրքագետ Ժ. Դրենին[3], որն այն համարել է «Կամենիցյան տարեգրության» հավելում։

Տարեգրության «Վենետիկյան» անվանումը պայմանական պետք է համարել։ Ժ. Դրենին[4] և Տ. Գրունինը[5] գտնում են, որ «Վենետիկյան տարեգրությունը» գրված է մեզ չհասած «Լվովյան տարեգրության» հիման վրա։ Բացառված չէ, որ սա հենց «Լվովյան տարեգրությունն» է, գրված Լվովում, քանի որ այս քաղաքը «Տարեգրությունում» հիշատակվում է նույնքան հաճախ, որքան Կամենիցը՝ «Կամենիցյան տարեգրությունում»։ Իսկ «Վենետիկյան» է այն կոչվում, հավանաբար, Վենետիկում պահվելու պատճառով։ «Տարեգրության» Լվովում գրված լինելու օգտին է խոսում նաև այն փաստը, որ հաճախ կրկնվում են «եկավ Լվով» կամ «եկան Լվով» արտահայտությունները։

Տարեգրության ձեռագրերից մեկը, ինչպես նշեցինք, պահվում է Վենետիկում՝ Մխիթարյանների մատենադարանում։ Դրանից է օգտվել Ղ. Այիշանը՝ իր հրատարակությունն իրագործելիս։ Բացի այդ, մենք հնարավորություն ունեցանք մանրաժապավենի օգնությամբ ծանոթանալու նաև Փարիզի ազգային գրադարանում պահվող հայատառ ղփչաղերեն № 194 ձեռագրին, որի 60ա—67ա էջերում զետեղված է նախորդից համարյա ոչնչով չտարբերվող «Վենետիկյան տարեգրության» մյուս օրինակը։

Ժ. Դրենին հիմնականում թարգմանել և հրատարակել է խնդրո առարկա տարեգրության այն նյութերը, որոնք վերաբերում են Լվովի հայկական գաղութի կյանքին։ Մինչդեռ «Տարեգրությունն» արժեքավոր է նրանով, որ այնտեղ նյութեր կան նաև Լեհաստանի, Մոլդավիայի և Թուրքիայի պատմությունն ուսումնասիրողների համար։ «Տարեգրությունում» հիշատակվող որոշ դեպքեր մեզ ծանոթ են այլ աղբյուրներից։ Նրա սկզբի մասը՝ մինչև Վենետիկի հիմնադրման մասին հիշատակությունը, պատմական արժեք չի ներկայացնում, ուստի ավելորդ ենք համարել ծանոթագրել։

«Վենետիկյան տարեգրությունը» հայատառ ղփչաղերենի կարևոր սկզբնաղբյուր է, որը սակայն, մինչև այժմ պատշաճ ձևով ուսումնասիրված չէ։ Փաստորեն այն անմատչելի է եղել հայագետների համար։ Գիտական հասարակայնությանը «Վենետիկյան տարեգրության» հետ ծանոթացնելու նպատակով փորձել ենք թարգմանել այդ սկզբնաղբյուրը հայերեն՝ նրան կցելով համապատասխան ծանոթագրություններ։ Կետերով նշված են այն բառերն ու նախադասությունները, որոնք անհասկանալիության պատճառով չեն թարգմանվել։

ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

---

[1] «Տարեգիրք հայոց իլախաց և օլախաց երկրի» («Բազմավեպ», Վենետիկ, 1895, էջ 529—534)։

[2] Ղ. Ա յ ի շ ա ն, Կամենից. Տարեգիրք հայոց Լեհաստանի և Թումենիո հավաստյա հավելվածովք, Վենետիկ, 1896, էջ 115—121։

[3] J. D e n y, L'arméno-coman et les „Ephemerides de Kamieniec (1604—1613)", Wiesbaden, 1957, p. 25.

[4] Նույն տեղում։

[5] Т. Н. Г р у ш и н, Документы на половецком языке XVII в., М., 1967, с. 109.

ՎԵՆԵՏԻԿՅԱՆ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՅԼ ԲԱՆԵՐ

Քրիստոսի ծննդից դեռևս 430 տարի առաջ թագավորները կառավարում էին Հռոմը։ Ամենից առաջին կեսարը Հուլիոսն էր, նրանից հետո՝ 27 թ. Օգոստոսը դարձավ կեսար, որի կառավարման ժամանակ էլ ծնվեց աստված Քրիստոսը սուրբ Աստվածածնից. Կառավարել է 52 տարի։

Քրիստոսի ծնվելուց առաջ Օգոստոս կեսարը կառավարեց 52 տարի, Հերովդես Մեծի թագավորությունը տևեց 32 տարի, սրանից Հրեաստանի թագավորությունը ժառանգեց Աբգար թագավորը, որը թագավորեց 1 տարի։

Նիկեյան ժողովը տեղի ունեցավ 322 թ.։

Ստամբուլի ժողովը՝ 73 թ.։

Հեփեսոսի ժողովը՝ 50 թ.։

Քաղկեդոնի ժողովը՝ 47 թ.։

Դրանկները հիմնադրեցին Վենետիկը Քրիստոսի ծննդից հետո 464 թ.։

Քրիստոնյաները սարակինոսներից խլեցին Հռոդոսը և պահեցին մինչև թուրքերի կողմից [նրա] կրավումը սուլթան Սուլեյմանի ժամանակ, 314 տարի հետո։ Քրիստոսի ծննդից հետո 984 թ. սուրբ Վոյցեխը[1] հունգարների մոտ քրիստոնեություն տարածեց։

997 թ. ս. Վոյցեխը քրիստոնեություն տարածեց լեհերի մեջ։

1290 թ. մահացավ հայոց Լևոն թագավորը[2]։

1361 թ. Լվովում կառուցվեց ս. Աստվածածին եկեղեցին։

1367 թ. հայկական վերջին թագավորը՝ Կոստանդին անունով, մահացավ և արդեն ոչ մի հայ թագավոր չեղավ։

Այն ժամանակվանից ի վեր, երբ պատվարժան տեր Գրիգորը եպիսկոպոսական աթոռին նստեց և դա եղավ՝ Քրիստոսի ծննդից ի վեր 1367 թ...

Քրիստոսից հետո 1384 թ. Կազիմիր Մեծ թագավորը սրով գրավեց իշխան Լևի[4] կողմից ղեկավարվող ռուսական երկիրը։ Զորեքշաբթի օրն էր, ս. Բարթուղիմեոսի տոնից հետո։

Քրիստոսից հետո 1410 թ. Յագայլոյի զորքը մարտ տվեց պրուսացիներին Մարբորգի մոտ[5]։

1444 թ. հունգարների Վլադիսլավ թագավորը Վառնայի մոտ պարտություն կրեց Մուրադի կողմից ղեկավարվող թուրքերից[6]։

1447 թ. Կազիմիրը դարձավ թագավոր[7]։

1453 թ. թուրքերը գրավեցին Ստամբուլը։

Քրիստոսից հետո 1454 թ. Կազիմիր թագավորի զորքը Խոյնիցայի մոտ մարտնչեց պրուսացիների դեմ[8]։

1459 թ. տեր Ավետիսը եպիսկոպոս կարգվեց նրանից (տեր Գրիգորից) հետո, մեր (այսինքն՝ հայկական) թվարկության ՉԸ թվականին (1459)։

1463 թ. եպիսկոպոս կարգվեց տեր Խաչատուրը (հայկական թվարկության 912 թ.)։

1465 թ. Ստեֆանը[9] հունգարներից խլեց Կիլիան[10]։

1467 թ. ծնվեց Սիգիզմունդ Մեր թագավորը[11]։

1472 թ. առաջին անգամ բացվել է Լվովի տոնավաճառը։ Կար երկու տոնավաճառ. մեկը՝ սուրբ Երրորդության օրը, երկրորդը՝ սուրբ Ագնեշկայի օրը։ Առաջինը՝ ս. Երրորդության օրը, չշարունակվեց, իսկ երկրորդը արվեց 1530 թ. Հուլիսի 13-ին՝ [որպես] սուրբ Մարկոյի [տոնավաճառ]։

1475 թ. հունվարի 10-ին Ստեֆանը ջախջախեց թուրքերին[12]։

1475 թ. հունիսի 20-ին թուրքերը գրավեցին Կաֆան։ [Դա եղավ] սուլթան Մեհմեդի[13] ժամանակ։

1481 թ. վախճանվեց սուլթան Մեհմեդը։

1484 թ. սուլթան Բայազիդը[14] գրավեց Կիլիան և Ակքերմանը[15]։

1485 թ. Ստեֆանը Կազիմիր թագավորին վերադարձրեց Կոլոմիան[16]։

1491 թ. հունվարին պան Նիկոլայ Գալիցկին թաթարներին հաղթեց. սաստիկ ձմեռ էր. հունվար։

1492 թ. վախճանվեց Կազիմիր թագավորը և թագավոր դարձավ Օլբրեխտը[17]։

1492 թ. հուլիսին ջրերը բարձրացան, շատ լճակներ գոյացան և [գալ] բերքին վնասեց։

1494 թ. իշխան Ալեքսանդրի[18] ժամանակ հրեաները Լիտվայի իշխանության սահմաններից դուրս վռնդվեցին։ Դա 1494 թ. մարտի 25-ին էր։

1494 թ. Լվովում հրդեհ եղավ [սուրբ] Աբասի օրը[19] և մեծ վնասներ հասցրեց։ [Դա եղավ] 1494 թ. օգոստոսի 6-ին։

1495 թ. սուրբ էջմիածնից որպես նվիրակ եկավ տեր Սիմեոնը. այդ տարի ժանտախտ եղավ, որի ժամանակ մահացան Շիմկոյի որդիները՝ Գրիգորը և Խաչկոն։

1497 թ. Օլբրեխտ թագավորը հաղթանակ տարավ Բուկովինայում, հոկտեմբերի 27-ին։

1498 թ. մայիսի 14-ին Մալկոչ բեյը[20] ժամանեց Լվով։

1499 թ. իշխան Ալեքսանդրի ժամանակ իշխան Կոնստանտինը գերեվարվեց Մոսկվայում, [բայց] 1507 թ. սեպտեմբերի 28-ին փախավ գերությունից[21]։

1499 թ. սուլթան Բայազիդը նվաճեց Լապոնտն ու Այնաբահրը[22]։ [Դա եղավ] սեպտեմբերի 4-ին։

1502 թ. վախճանվեց եպիսկոպոս տեր Խաչատուրը։

1504 թ. հունիսի 14-ին վախճանվեց Ստեֆանը։

1505 թ. Լվով ժամանեց Ղաղար վարդապետը։

1505 թ. Ալեքսանդր թագավորը[23] Լվովի հայերին թույլ տվեց կնիք գործածել։

1507թ. փետրվարի 6-ին Սիգիզմունդը դարձավ թագավոր։

1508 թ. էջմիածնից նվիրակ եկան տեր Հովհաննես եպիսկոպոսը, տեր Ստեփանոսը, տեր Սարգիսը, Դավիթ աբեղան. այնուհետև գնացին Ստամբուլ և [ճանապարհին] նահատակվեցին։

1509 թ. Սիգիզմունդ թագավորը հանձնեց վոյթի և... պարտականությունները Պիոտրկովում[24]։

1509 թ. Բոգդանը[25] եկավ Լվով՝ Վարդավառի տոնին, բարիկենդանի օրը։ Այդ տարի գրավվեց Ստամբուլի բերդը[26]։

1510 թ. ներկվեց տեր Աստվածատուր եկեղեցու գմբեթը։

1510 թ. [սուրբ] Եղիայի օրը ուժեղ բամի վլեց։

1511 թ. ուժեղ հրդեհ եղավ Ակքերմանում։ Պան Իվաշկոն՝ ընկերների և որդիների հետ միասին այրվեց։ Այդ տարի փետրվարի 2-ին, Սիգիզմունդ թագավորը ճաշկերույթ կազմակերպեց հունգարներից Յանիշը խլելու առթիվ։ Այդ տարի սուլթան Բայազիդը ... արեց։

1512 թ. թաթարները գրավեցին Վիշնյովեցը[27]։

1512-ն էր, որ Կրեուսբուրգում հավաքվեցին կայսրը և 3 թագավորներ[28]։

1513 թ. սուլթան Սելիմը հեռացավ Թավրիզից, իրենից հետո թողնելով մեծ ավերածություններ[29]։

1513 թ. մոսկովյան իշխանը գրավեց Սմոլենսկը[30]։

1513 թ. ժամանեց Ալեքսանդր թագավորի կինը։

1514 թ. Գրիգոր ... եպիսկոպոսը և Հակոբ աբեղան նվիրակության եկան. այդ ժամանակ անասնաճարակ էր։

. . . . . .

1515 թ. հոկտեմբերի 25-ին վախճանվեց թագուհին՝ Սիգիզմունդ թագավորի կինը։

1515 թ. տեր Գալուստը եպիսկոպոս դարձավ։

1516 թ. սուլթան Սելիմը գրավեց Եգիպտոսը, Երուսաղեմը, Հալեպը և Սիրիան[31]։

1517 թ. Սիգիզմունդ թագավորը [կրկին] ամուսնացավ և կինը նրան 1520-ին տղա ծնեց, որը թագաժառանգ դարձավ[32]։

1518 թ. գլխատեցին Իվաշկոյին։

1518 թ. Սիգիզմունդ թագավորը մեզ՝ հայերիս, թույլատրեց ունենալ դատարան, տեղեր քաղաքապետարանում և երդվյալ ատենակալներ[33]։

1519 թ. լեհերը Սոկալի[34] մոտ պարտություն կրեցին։

1520 թ. Սուլեյմանը[35] դարձավ սուլթան։

1520 թ. Աղայի որդին Լվով ժամանեց։

1521 թ. մեր եկեղեցին, ամրոցի հետ միասին, երկրորդ անգամ կառուցեցին։ Այդ տարի թուրքերը գրավեցին Բելգրադը։ Այդ տարի տեր Գրիգորին օրհնեցին քահանայության։ [Նա] մահացավ 1526 թ. հունիսի 21-ին։

1523 թ. հունվարին թուրքերը գրավեցին Հռոդոսը։ Այդ տարի [եկեղեցու] խորանի մեծ պատկերը երկրորդ անգամ ոսկեջրվեց։

Այդ տարի Տաշ օղլին եկավ և գրավեց Իոհատինը։

Այդ տարի հունիսի 25-ին թուրքերը եկան Լվով։

Այդ տարի հուլիսի 26-ին կրկին եկան թաթարները և ս. Աբասի օրը[36] գահ նստեցրին պան Միկլաշին։

Այդ տարի հունիսի 2-ին Սիգիզմունդ թագավորը եկավ Լվով։

1524 թ. Շտեֆանը՝ Արբունիին իր յոթ որդիների հետ միասին գլխատեց։

1525 թ. պրուսացի Գիմսարը հավատարմության երդում տվեց Սիգիզմունդ թագավորին։

Այդ տարի օգոստոսի 10-ին վարդապետ եկավ [Էջմիածնի՞ց]։

1526 թ. թուրքերը արշավեցին Հունգարիայի վրա, սպանեցին հունգարների թագավորին և ավերեցին Բուդան[37]։

1526 թ. օգոստոս ամսին մորեխը հարձակվելով Վալախիայի վրա՝ մեծ վնաս հասցրեց բերքին։

1527 թ. ստարոստա Սետմիկրոցկին դարձավ Հունգարիայի թագավոր[38]։

1527 թ. հունվարի 27-ին, կիրակի օրը, աստծո օգնությամբ իշխաններ Կոնստանտինը և Օստապը ջարդեցին թաթարներին, Կանևից 5 մղոն հեռավորության վրա տեղավորեցին 17000 [մարտիկներ] և բազմաթիվ մարդկանց գերեցին։

1527 թ. կայսրը թնդանոթներից ռմբակոծեց, գրավեց Հռոմը և գերեվա-

րից պապին ու նրա 14 կարդինալներին իրենց տներում։ Դա մայիսի 7-ին էր[39]։

1527 թ. հունվարին հոսպոդար Ռարեշը[40] դահ բարձրացավ Վալախիայում։

1527 թ. հունիսի 3-ին Լվովում հրդեհ եղավ, շատ մարդիկ զոհվեցին։

Հունիսի 11-ին տեր Մկրտիչ ավագերեցը հոգին աստծուն ավանդեց։ Այդ տարի թագավորը 20 տարվա ազատություն պարգևեց[41]։

1528 թ. մարտ ամսին Ստամբուլում երկրաշարժ եղավ, որը մեծ ավերածություններ առաջացրեց։

1528 թ. ապրիլի 25-ին Կրակովը հրդեհվեց, շատ զոհեր եղան։ Թագավորը Վիլնոյում էր։

1529 թ. սեպտեմբեր ամսին վանքի շրջակայքը բարեկարգվեց։

1529 թ. մայիսի 24-ին սուլթան Սուլեյմանը դուրս եկավ Էդիրնեից և գնաց Ֆերդինանդի վրա, որը գտնվում էր Վիեննայում։ 17 օր անօգուտ գրոհեց [Վիեննան] տալով մեծ զոհեր, խայտառակ կերպով նահանջեց Դանուբի հոսանքով ներքև, ոչխատեց Իբրահիմ փաշային և լքելով բոլոր յուրայիններին ,ու դանձերը, ջրային ճանապարհով վերադարձավ իր երկիրը[42]։

1529 թ. հուլիսի 8-ին վախճանվեց պան Ստանիսլավ Մարշալկոն և նրան փոխարինեց եղբայրը։

1529 թ. հունիսի 17-ին տեր Նիկոլը եկավ Լվով. օգոստոսի 2-ին Սլամ [Սուլեյման] սուլթանը[43] Օշակովի մոտ հաղթեց Ցազլովեցկուն։ Լեհերից 4200 հոգի գերի ընկան։

1530 թ. թագավորի որդին՝ Օլբրեխտը, Ղրիմ եկավ և դարձավ Վոլինի իշխան, ապրիլ ամսվա 8-րդ օրը։

1530 թ. մարտի 29-ին ժամը 11-ին արևի խավարում եղավ։

1530 թ. Կամենիցում ժանտախտ էր, որը սկսվել էր հուլիսին։

1530 թ. հունիսի 21-ին հրդեհվեց Վիլնո քաղաքը։

1530 թ. Տիշինսկիները սկսեցին կարգի բերել Տրաբոնվլեի բերդը։ Այդ տարի Մոլդավիայի հոսպոդար Ռարեշը զավթեց Բիստրիցա քաղաքը։

1530 թ. օգոստոսի 1-ին վախճանվեց Կոնստանտին իշխանը[44], որը 66 անգամ բանակը տարել էր մարտի և հաղթող դուրս եկել։

1530 թ. դեկտեմբերի 1-ին եկավ վալախցի Թարիշ բեյը և ...

Սուրբ ... օրը անընդհատ անձրև էր գալիս, հետո կիրակի օրը [բոլորը] գնում էին ... սրբապատկերներով, զենքով։

1532 թ. մայիսի 8-ին Կրակովում հրդեհ եղավ, որը մեծ վնաս հասցրեց բնակչությանը։

1532 թ. այդ տարվա հունիս ամսին Լվովում ժանտախտ բռնկվեց, դադարեց հուլիսին. նախ և առաջ խոզերը սատկեցին. Մկրտիչ աբեղան մահացավ սեպտեմբերի մեկին, Շմավոն-Հարպետը՝ 28-ին, տեր Պետրոսը՝ 29-ին։

Այդ տարի Լուբաշևում նույնպես զոհեր եղան։

1532 թ. դեկտեմբերի 21-ին նվիրակության ժամանեցին տեր Ստեփանոս վարդապետն ու եպիսկոպոսը, 2 աբեղաների հետ միասին, որոնցից մեկի անունը Ղևոնդ էր, մյուսինը՝ Մաթևոս։

1532 թ. մարտի 23-ին չեխերի թագուհու պատճառով սուլթան Սուլեյմանը մեծ զորքով դուրս եկավ Ստամբուլից և հոկտեմբերին հետ վերադարձավ Վիեննայի պատերի տակից չախչախված զորքով ու մեծ խայտառակությամբ։

1533 թ. ջրերի մակարդակը բարձրացավ և գոյացած ջրային կուտակումներում մեծ քանակությամբ բերք ոչնչացավ. ջրերում շատ մարդիկ զոհվեցին։

1533 թ. Սոկալում հրդեհ եղավ և շատ վանականներ վնաս կրեցին։ Հուլիս ամսին կնսգիշերին պոչավոր աստղ երևաց։

1533 թ. հունվարի 1-ին վախճանվեց Կրակովի պան Քշիշտոֆ Շիդլովեցկին։

1534 թ. հունվարի 3-ին Ռարեշը դարձավ Վալախիայի հոսպոդար և հրամայեց ս. Ծննդյան տոնի օրը ուժեղ ծեծել հայ քահանաներին։

1534 թ. մարտի 10-ին վախճանվեց Լվովի ստարոստան՝ Օթա Գալիցկին։

1534 թ. հունիսի 12-ին սուլթան Սուլեյմանը մեծ զորքով դուրս եկավ Ստամբուլից և արշավեց ղրղրլբաշների դեմ, իսկ ծովով՝ 400 նավով մեծ զորք ուղարկեց։

1534 թ. հուլիսի 10-ին գետերի մակարդակը բարձրացավ։ Վիսլան ողողեց շատ տներ, քանդվեց Կրակովի կամուրջը և շատ մարդիկ զոհվեցին, բազմաթիվ հուշարձաններ ավերվեցին։ Վիսլայի մակարդակն այնքան բարձրացավ, որ ողջ Շլյոնսկի մարզում բաղում լճակներ գոյացան, իսկ բերքի պակասից Կրակովում սով սկսվեց։

. . . . . .

Հոկտեմբեր ամսին մահացավ Կամենիցի ստարոստա Լանսկորինսկին, իսկ դեկտեմբերին՝ Կրակովի եպիսկոպոս Դոմիցկին։

1535 թ. օգոստոսի 8-ին թագավորը եկավ Կրակով և իր դստերն ամուսնացրեց մարկգրաֆ Յանի հետ։ [Դա եղավ] օգոստոսի 29-ին։

1535 թ. հուլիսի 13-ին Վալախիայի հոսպոդար Ռարեշը հրդեհեց ողջ Պոկուտյեն՝ մինչև Հալիչ։

1535 թ. ս. Աստվածածին եկեղեցին վերակառուցեցին երկրորդ անգամ վերևի մասը ... երկու կողմերից նոր մեծ ... սարքեցին, ներսում կարգ ու կանոն հաստատեցին, [դա] օգոստոսի 14-ին էր. և սպիտակեցրին, շուրջն էլ կառուցապատեցին։

1536 թ. հոկտեմբերի 18-ի օրն այրվեց Կրակովի բերդը և թագավորը Լիտվայից վերադարձավ նոյեմբերի 8-ին։

1536 թ. հուլիսի 25-ին Կամենիցում փոթորկալի քամի փչեց, որը քաղաքապետարանի շրջակայքում ավերեց 150 տուն։

1536 թ. հունվարի 3-ին վախճանվեց կրակովցի պան Դինչինսկին։ Անձվոժը ամուսնացավ իշխան Մակովեցկու դստեր հետ։ [Սա եղավ] փետրվարի 27-ին։

. . . . . .

ՍԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Ս. Վոյցեխ (Ադալբերտ Պրագացի)՝ մոտ 955—997—չեխ եկեղեցական գործիչ, որը շատ բան արեց չեխերի, լեհերի, հունգարների մեջ տարածելու քրիստոնեական կրոնը։ Սպանվել է պրուսացի ոմն հեթանոս քուրմի կողմից։

2. Կիլիկիայի Լևոն III Ռուբինյան թագավորը մահացել է 1289 թ. փետրվարի 6-ին։

3 Խոսքը Կիլիկիայի հայկական պետության նախավերջին՝ Կոստանդին V թագավորի մասին է, որը դավադրաբար սպանվեց 1373 թ.։ Նրանից հետո, մինչև 1375 թ. թագավորեց Լևոն VI կիլիկյան վերջին թագավորը։

4. Հեղինակը, հավանաբար, նկատի ունի Սմոլենսկի Սվյատոսլավ Իվանովիչ իշխանին (1358—1386)։

5 Քաղաք Լեհաստանի հյուսիսում։ Ժամանակին՝ Տևտոնյան օրդենի մայրաքաղաքը, որի մոտ տեղի ունեցավ ճակատամարտ օրդենի և լեհ-լիտվական զորքերի միջև։

6 Լեհերի Վլադիսլավ III Վարնենչիկ (1434—1444) թագավորը, որը հետագայում դարձավ նաև հունգարների թագավոր, մի շարք խոշոր հաղթանակներ տարավ թուրքերի նկատմամբ և շատ ձեռնտու պայմաններով 10 տարով հաշտություն կնքեց։ Հետո, տեղի տալով պապական նվիրակ Ջուլիանո Ցեզարինիի հորդորներին, խախտեց պայմանագիրը և վերսկսեց ռազմական գործողությունները սուլթան Մուրադ II-ի (1421—1451) զորքի դեմ, սակայն 1444 թ. Վառնայի տակ ջախջախիչ պարտություն կրեց և ինքն էլ զոհվեց մարտի դաշտում։

7 Կազիմիր (Կազիմեժ) IV Յագելլոնչիկ՝ Լիտվայի մեծ իշխան (1440—1492) և Լեհաստանի թագավոր (1447—1492)։

8 Խոյնիցա քաղաքի մոտ տեղի ունեցած ճակատամարտում Տևտոնյան օրդենի զորքերը պարտության մատնեցին լեհերին։

9 Հեղինակը նկատի ունի Մոլդավիայի հոսպոդար Ստեֆան III Մեծին (1457—1504)։

10 Քաղաք Բեսարաբիայում, Դանուբի գետաբերանի մոտ։

11 Սիգիզմունդ I Մեր (1467—1548)՝ լեհական թագավոր և լիտվական մեծ իշխան 1506 թվականից։

12 Ճակատամարտը տեղի ունեցավ Վասլույ քաղաքի մոտ։ Թուրքական բանակը համարյա կրկնակի թվական գերակշռություն ուներ, բայց նրա պարտությունը կատարյալ էր՝ շնորհիվ Ստեֆանի ռազմական տաղանդի։

13 Մեհմեդ II Ֆաթիհ (1451—1481)։

14 Սուլթան Բայազիդ II (1481—1512)։

15 Քաղաք Դնեստրի գետաբերանի մոտ. այժմ կոչվում է Բելգորոդ-Դնեստրովսկի և մտնում Ուկրաինական ՍՍՀ Օդեսայի մարզի մեջ։

16 Այժմ շրջանային կենտրոն Ուկրաինական ՍՍՀ Իվանո-Ֆրանկովսկի մարզում։ Ստեֆանի մասին տե՛ս ծան. № 9։

17 Լեհական գահի վրա Կազիմիրին (տե՛ս ծան. № 7) հաջորդել է Յան Օլբրեխտը (1492—1501)։

18 Կազիմիր IV-ի մահից հետո Լիտվայի մեծ իշխան դարձավ Ալեքսանդրը (1492—1506), որը 1501—1506 թթ. նաև Լեհաստանի թագավորն էր։

19 Մեզ չհաջողվեց պարզել, թե որ սրբի անունն է աղավաղվելով դարձել Աբաս։

20 Հեղինակը նկատի ունի բուլգարական Սիլիստրա քաղաքի փաշա Մալկոչ բեյին։

21 Սա տեղի է ունեցել ոչ թե 1499, այլ՝ 1500 թ., երբ Վենդրոչ գետի մոտ ռուսները ջախջախեցին լիտվական բանակը, գերեվարելով նրա հրամանատարին՝ իշխան Կոնստանտին Օստրոժսկուն։

22 Վենետիկի և Թուրքիայի միջև 1499—1502 թթ. տեղի ունեցած պատերազմը սկսվեց թուրքերի կողմից հունական Լեպանտո (Նավպանտոս) քաղաքի գրավումով։

23 Տե՛ս ծան. № 18։

24 Սիգիզմունդի մասին տե՛ս ծան. № 11։ Պիոտրկովը քաղաք է Լեհաստանում՝ Վարշավայի և Կրակովի միջև։

25 Խոսքը, հավանաբար, Մոլդավիայի իշխան Բոգդանի (1504—1517) մասին է։

26 Հեղինակը, ըստ երևույթին, նկատի ունի քաղաքի ներսում տեղի ունեցած բազմաթիվ ենիչերիական ապստամբություններից մեկը։

27 Քաղաք նախկին Վոլինում, այժմ՝ Ուկրաինական ՍՍՀ Տերնոպոլի մարզում։

28 Հեղինակը, հավանաբար, նկատի ունի Ֆրանսիայի դեմ կազմված «Սրբազան լիգայի» հավաքներից մեկը, որի անդամ էր նաև «Հռոմեական սրբազան կայսրության» կայսր Մաքսիմիլիան I-ը (1486—1519)։

29 1513 թ. սուլթան Սելիմ I Ահեղը (1512—1520) շիաների դեմ պայքարի նշանաբանով պատերազմ սկսեց սեֆյան Պարսկաստանի դեմ, ջախջախեց շահ Իսմայիլ I-ի բանակը և 1514 թ. գրավեց Սեֆյանների մայրաքաղաք Թավրիզը։

30 Հեղինակը նկատի ունի Մոսկովյան մեծ իշխան Վասիլի Իվանովիչի (1505—1533) կողմից Սմոլենսկի գրավումը և նրա միացումը Ռուսաստանին, որը տեղի ունեցավ 1514 թ.։

31 Սելիմ I Ահեղը Եգիպտոսը գրավել է 1517 թ.։ Մնացած փաստերը ճիշտ են։

32 Լեհերի ապագա Սիգիզմունդ II Ավգուստ թագավորը և Լիտվայի մեծ իշխանը (1548—1572)։ Ծնվել է 1520 թ. օգոստոսի 1-ին։

33 1519 թ. մարտի 5-ին Պիոտրկովյան սեյմում ընդունվեց և Լեհաստանի թագավոր Սի-

գիզմունդ I-ի կողմից հաստատվեց Մխիթար Գոշի «Դատաստանագրքիս» հիման վրա ստեղծված «Լեհահայոց դատաստանագիրքը», որով ղեկավարվում էին լեհահայերի դատարանները։

34 Քաղաք Բուդ գետի վրա, Լվովից հյուսիս։

35 Հեղինակը նկատի ունի սուլթան Սուլեյման I Օրենսդիրին (1520—1566), որի օրոք Օսմանյան կայսրությունը հասավ իր հզորության գագաթնակետին։

36 Տե՛ս ծան. № 19։

37 Խոսքը Մոխաչի հանրահայտ ճակատամարտի մասին է, ուր թուրքերը ջախջախեցին հունգարներին և գրավեցին նրանց մայրաքաղաք Բուդան։ Մարտում սպանվեց հունգարների թագավոր Լայոշ II-ը (1516—1526)։

38 Հեղինակը նկատի ունի սեմիգրադյան վոեվոդա Յանոշ Զապոլյային, որը 1526 (ոչ թե 1527)—1540 թթ. եղել է Հունգարիայի թագավոր։

39 Այստեղ խոսվում է «Հռոմեական սրբազան կայսրության» կայսր Կարլոս V-ի (1519—1556) կողմից Հռոմի գրավման և Կլիմենտ VII պապի ու նրա կարդինալների գերեվարման մասին։

40 Հեղինակը նկատի ունի Ստեֆան III-ի (տե՛ս ծան. № 9) որդուն՝ Պյոտր Ռարեշին, որը Մոլդավիայի հոսպոդար է եղել 1527—1538 և 1541—1546 թթ.։

41 Հեղինակը, հավանաբար, նկատի ունի, այսպես կոչված, «էիտվական կանոնադրության (ստատուտ)» ընդունումը, որը, սակայն, տեղի է ունեցել 1529 թ.։

42 Իբրահիմ փաշան Սուլեյման I Օրենսդիրի մեծ վեզիրն էր. իր ձեռքում կենտրոնացնելով շատ մեծ իշխանություն, նա դրանով իսկ հարուցեց Սուլեյմանի ցասումը, որը նրան անհավատարմության մեջ կասկածելով՝ հրամայեց մահապատժի ենթարկել։

43 Տե՛ս ծան. № 35։

44 Կոնստանտինի մասին տե՛ս ծան. № 21։